

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

ՀՐԷՇԱՒՐ ԵՐԵՒՈՅԹ

Վրայ հասաւ Հայոց գրի ու գրակա-
նութեան համազգային յորելեանը,
կարծես որպէս մի փորձաքար փորձե-
լու Հայ ժողովրդի ու նրա զեկավար
չըջաննիւրի ազգային զգացմունքն ու
գիտակցութիւնը, և պարզեց չափա-
զանց տխուր մի վիճակ: Մեծ յորե-
լեանի հետ միասին հանդէս եկան
Պարթև Սահակն ու սքանչելի Մե-
րոպն իրենց լուսապսակներով, լոյս
ձգեցին մեր ժամանակի իրականու-
թեան վրայ ու յայտնեցին շատ ողոր-
մելի տեսարաններ:

Քաջութիւն պէտք է ունենանք խոս-
տովանելու և քննելու, թէ ինչեր յայտ-
նեցին, և, երևի հաշիւ կըտանք ու
կըխօսենք յորելեանից յետոյ. բայց
էնպէս երևոյթ էլ յայտնեց, որ ինչ-
քան էլ սրտով ուզենաս, չես կարող
ծածկել, թէկուզ մի քանի օրով, որով-
հետև նա հէնց ինքն է գոտում:

Կարդացէք «Մշակի» վերջին № 221,
«Ինչ՞նչ մերժեցինք» խմբագրական
յօդածը: Եւ ինչն են մերժել, գիտէ՞ք,
Հայ Գրողների ընկերութեան կոչի
տարածելը, էն էլ փողով, Բայց հերթը

չի, որ մերժել են, ետևիցն էլ, կարդա-
ցէք թէ ինչ են գրում:

Եւ սա իրականութիւն է: Եւ զար-
հուրելի է, երբ մտածում ես, որ սա
իրականութիւն է. երբ մտածում ես,
որ մի ժողովրդի կեանքում մարդ կա-
րող է լինել, թերթ կարող է լինել,
որ նոյն ժողովրդի լեզուով գրի, տպի,
զրկի իր բաժանորդներին ու հաւա-
տացիւ, թէ էդ ժողովրդի գրականու-
թեան մեծ տանի օրը չի կարելի մէջ
բերել հէնց նրա գրականութիւնն ու
գրական ֆոնդը: Եւ սակայն փաստ է,
որ էս տեսակ մարդ ու թերթ գոյու-
թիւն ունի մեր կեանքում: Եւ ո՞վ գի-
տի, կարող են մարդիկ էլ գտնել ծայ-
րայեղ միամիտ, որ հաւատան, թէ
ճիշտ որ, երևի Հայոց Գրականութեան
յորելեանի օրը հաւ պէտք է քաշէր
հէնց Հայոց միակ Գրական Ընկերու-
թիւնը իր Գրական Ֆոնդով, թէև էդ
ըստը մարդիկ, նոյն իսկ ծայրայեղ
վատերը, ամբողջ տօնական տարին
խօսել են գրականութեան անուանից և
տանի օրն էլ գրականութեան անունն
է լինելու շրթունքների վրայ, իսկ
սրտերում օձեր ու օձեր:

էդ վատնողի թշուառականները, որ

էնքան քան տակնուվրայ արին ու պատակտեցին, տքնում ու ճգնում են պատակտում մտցնել և հայոց գրակա- նութեան ու դպրոցի մէջ, հաւատա- ցնելով, միամիտեանքին թէ նրանք իրար ղէմ են կանգնած, և էն էլ էն նւիրա- կան օրը, երբ հայոց գիրն ու գրակա- նութիւնը, ուսուցիչն ու գրողը միա- սին կանգնած տօնելու են իրենց միասնական գործի վե՛հ տօնը:

Համարձակում են հայերէն տպել ու դրկել հայ բաժանորդներին, թէ Կովկասի Հայոց Գրողների ընկերու- թեան գրական ֆոնդը գրական ֆոնդ չէ, այլ մի քանի մասնաւոր գրողների ֆոնդ է, անւանում են զրան թայֆա- յական, դասակարգայն, նոյն իսկ անձնական գործ, և զրգոում են հա- սարակութիւնը ընկերութեան հրաւէրի ղէմ:

Եւ ճվ են զրանք, որ յանդգնում են էգպէս խօսել ու դուրս գալ Հայ Գրողների ընկերութեան ղէմ, էն օրը, երբ հայոց գրականութիւնը տօնում է իր 1500 ամեակի տօնը: Նրանք, որ երէկ տօնեցին նոյն ժողովրդի առաջ իրենց մասնաւոր գործի, իրենց թերթի կասկածելի 40-ամեակը, ան- ւանեցին և հասարակական, և ազգա- յին գործ, և ղեռ շարունակում են նւէրներ հաւաքել:

Եւ էս մարդկանց անսանձ կուրու- թիւնն ու վատութիւնը ղեռ էսքանով չի վերջանում. սպառնում են տօնից յետոյ աւելին ասել:

Բայց մի՞թէ սրանից աւելին կարող է ասել թէկուզ ամենայնաճղակ մար- ղը աշխարհում:

Էլ աւելին ի՛նչ կարող է լինել:
Յովհ. Թումանեան

ՅՈՒՐՆԵԱՆԻ ՇՈՒՐՁԸ

Թիֆլիսի թեմի առաջնորդարանում էջմիածնից ստացւած է յորելեանի առթիւ հրատարակած Գ. Ալթունեա- նի «Հայ գրի և տպագրութեան մեծ յորելեանը» գիրքը, հայ դպրոցների աշակերտներին բաժանելու համար:

Տպւում են Ս. Մեսրոպի և Ս. Սա- հակի մեծագիր պատկերները 5000-ա-

կան օրինակ, որոնք բաժանելու են հայ դպրոցներին:

Յորելեանի առթիւ տպագրուած է «Ղուկասեան մատենադարանի» հրա- տարակութեամբ Կորիւն վարդապետի «Պատմութիւն վարուց սրբոյն Մես- րոպի» գիրքը:

Կովկասի Հայոց Բարեգործական ընկ. Սորհուրդը որոշել է.—ամբողջ կազմով ներկայ լինել Թիֆլիսում կատարելիք յորելեանական հանդէս- ներին: Ձրիաբար բաժանել ներսի- սեան,Յովնանեան և Գայիանեան զըպ- րոցների բարձր դասարանների աշա- կերտներին Ա. Պողոսեանի հրատա- րակչական ֆոնդի գումարով հրատա- րակւած «Ս. Մեսրոպ» գրքից: Էջմի- ածնում կատարելիք յորելեանական տօնախմբութիւններին որպէս ընկե- լութեան ներկայացուցիչներ ներկայ են լինելու պ. պ. Սարգիս Մելքո- մեան և Կարապետ Սալաթեան:

ԳՈՐԻՍ, 3 հոկտեմբերի

Տառերի գիւտի և տպագրութեան յորելեանը տեղիս ծիսական դպրոցի մանկավարժական խորհրդի որոշումով տօնելու է ամսոյս 13-ին:

Մանկավարժական խորհուրդը որո- շել էր ղիմել տեղիս սիրող-սիրողու- հիններին, որպէսզի վերջինսպիս մի որեւէ կերպով մասնակցէին այդ տօնին:

Այդ առթիւ անցեալ ամսի 22-ին ժողովի էին հրաւիրւած սիրող-սիրողուհիները:

Ժողովականները երկար զբաղւելով յորելեանը տօնելու խնդրով և մի շարք անյարմարութիւններ ի նկատի առ- նելով, որոշեցին ժողովի օրագրից հա- նել ներկայացում կազմակերպելու խնդիրը:

Որոշում կայացւեց, յորելեանը տօ- նելու միայն մի հանդիսով և յետոյ մշակւեց հանդէսի ծրագիրը:

Հանդէսին մասնակցելու են նաև Բարառուշի և Գորիսի գիւղամասի դպրոցների ուսուցիչները՝ իրենց աշա- կերտներով:

Մեծաոր